Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22869-
22870

378
Ф-79

50

Printed in Turkey

2002

ՄԻ ԿԱԹԻԼ

ԱՐՑՕՍՐ

ԶՈՐ ԿԸՀԵՂՈՒ

ԾԻՈԱԿ

ՀԱՅ ՄՈՒՐԻՆ ՎԵՐԱՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. Մ. Աշճեան եւ ընկեր
1879

4718

9(47.925)

Առ

ԵՂԻԱ ԷՖ. ՏԻՒՐԿԷՐԵԱՆ

Տէր և Բարեկամ.

Այս երկրորդ անգամ պատեհ կ'ունենամ հրապարակ ելնել, Դուք կ'առաջնորդէք 'զիս անդ. շնորհ ունիմ Ձեզ։

Ցկար են գաղափարներս, այլ ոչ անարդար զի անդ չը պիտի գտնուի մի տող, որ նախատ քսէ արդարի ճակատին, մի բառ, որ հալած աղաղակէ բարիին դէմ և մի խօս, որ մրէ ճշմարտութիւնն. Ձեմ վարանիր ի լոյս ընծայել 'զայն։

Ծայրէ ի ծայր արցունք են տողերս այլ արտօսրն ալ իւր օգտակարութիւն ունի. վստահ եմ այսմ։

Տէր և Բարեկամ. պարտ էր ինձ Ձեզ ընծայել 'զայս գրքոյկ. այլ գրեթէ մի ամէ ի վեր մտադրած էի նուիրել 'զայն — Հայրէ» առաջ — այն հանճարաւոր և մեծ Գրագէտին, որ անուղղակի, այլ հզօր առաջնորդ եղաւ ինձ ներշնչելով անդիմադրելի տենչանքներ ազգային և գրական. Ե. Տէմիրճիպաշեանի, իմ վստահար Բարեկամի և Վարպետի անդրանիկ գործն մի լոյս է, որ կ'ողողէ հոգին համակ. մի հուր է սրբազան, որ կը վառէ անշէջ. մի օրի մէջ քան ութ անգամ ընթերցայ 'զայն. ո՛չ, ի՞նչ կ'ասեմ, լափեցի անյագաբար։

Արդ, թողէ՛ք ինձ, Տէր, սիրտս, որ մի անսպառ մատեան է վիշտի, նուիրել Ձեզ, որ ազնիւ էք այդքան և բարի և հաւատ ունիք սաստիկ ազգային վերայ.

ՍԻՍԱԿ

— մայիս 21 Բէրա

6740.ԾԶ

ՁՕՆ

ԱՌ

Պ. Ե. ՏԷՄՈՒՐՃԻՊԱՇԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԷՏ

Մի խոր հիացումի նուէր դուզնաքեայ
ընդունէ՛ 'զայս գրքոյկ, ազնի՛դ եղիա։

1878 Մայիս 28
Բէրա

ՍԻՍԱԿ

Ա.

Մեծապատիւ Հանդիսականներ,

Անցեալ տարի — որքա՜ն ծանր անցաւ նա — այն օրէ յետէ, ուր դիւանագիտական զայրոյթն իւր յետին միջոցի կը դիմէր, բանավարութիւնն թնդանօթին կը վարէր ուժգին, որպէս փրկարարի։ և աշխարհների ծփուն բախտն անորոշ, դեսպանական գիտութիւնն նոր նոր կնճիռներով կը պարաւանդէր, յարուցանելով բիւր տագնապներ, աստ ի բեմ ելայ ջանալով պարզել մի անանչան և հիւանդ միտի տկար, այլ ոչ անարդար խոհերն ի նպաստ այն չարչարուած և լքուած ժողովուրդի, որ Հայ կ'ասուի, և 'զոր աշխարհ կը մոռնայ ցաւերովն համբուն։ յայնժամ կը խօսէի ինչ որ պէտք էր մեր ժողովուրդին և այսօր ալ, ուր պատեհ է ինձ կրկին ողջունել ըզ Ձեզ, իմ ազնի՛ւ ընկերներ, պիտի խօսիմ ինչ որ այնքան խոր և տխուր ներգործումներ ազդեց Հայ և հայասէր սիրտերի մէջ։

Մի տարի անցաւ, յամր, անողոք, լի ահեղ պատահարներով և արիւնոտ յիշատակներով բեռնաւորուած. անցաւ նա ծանր ծանր իւր ետեւ գծելով սոսկումն և արհաւիրք, որպէս թէ անցած լինէր հողագունտին վերայէն նախախնական մի չունչն անիծանօղ բերելով իւր հետ քանդ, աւեր և մահ։

Ներեցէք ինձ, աղնիւ Հանդիսականներ թուել իմ ոմանն թէ ի՞նչեր անցան Հայ ժողովուրդի գլխէն այդ արիւնալից տարիի մէջ, ու միլիոնաւոր մարդեր կը զոհուին, և որ զանազան ժողովուրդների անվերջ ճգնաժամն կը լինի։

Այդ տարիի մէջ ժողովուրդի քիրան, հացն և կեանքն խլեցին իւր ձեռքէ, երկիւղով համակեցին իւր սիրտ, սարսափով և մի անդր — մարդկային ատելութիւնով լցին 'ղինք, վրէժով բորբոքեցին իւր հոգի և հուրէ և բոցէ անցուցնելով 'զայն, տարին ապա հաղարաւորներն ի միասին հոգեցին այն լայն խրամի մէջ, ուր կը հանդչին կոիւէ վերջ խառն ի խուռն ձգուած, ուր մայրեր կը գնան արտասուաթոր փնտռել իւրեանց զաւակների յետին ճաիւնն։

Մահն մի օրէն է բնական. այլ անեծապարտ չէ՞ այն մահ, որ նիւթով կը գայ և ժողովուրդի է՛ն առոյգ, է՛ն կայտառ զաւակներն կը խլէ կը տանի, ամեն ուրէք թշուառութիւն, յուսահատութիւն և կսկիծ թողուլով։

Այս տարիի մէջ, պարոններ, ոչ նուազ աղէտներ անցան Հայ—աշխարհի վերայէն քան այլ ուրէք. անդ ևս գոռաց Ռուսն իւր բոլոր կատաղութիւնով, անդ ևս մարտնչեցաւ գինուորն, ժողովուրդի կոյր զաւակն, այն վայրագ և հայհոյալից յոյսով, ուր յաղթանակ կ'ասեն։ Անդ դաշտին մէջ, ուր մի ամէ առաջ Հայ մշակն աշխատաւոր արօր կը վարէր, ակօս կը գծէր հոգին աւանդելով ցորենի հատիկներն, որպէս զի նախախնամական գթառատ նայուածքի տակ ծլին և

ասդ, այսօր. արտին մէջ, դաշտին մէջ չիրիմնե՛ր են կանգուն, ոչ արօրավարին եզներ կը բառաչեն, ոչ խաշնարածին ստինք կը հնչէ, ոչ որակապը կ'երգէ խնդագին. ամէն ուրէք լռութի՛ւն. ամէն ուրէք գերեզմա՛ն։

Եւ դիտէ՞ք, ի՞նչ եղաւ մեր մշակն աշխատաւոր.— թողուց փախա՛ւ. փախաւ ատանդական սարէ սար, լեռէ լեռ, ցորէ ցոր, հովիտէ հովիտ, նօթի, անտէրունջ և հալածական, անտուն և անատացուածք. սարագիր հայրենիքէ խուժին երեսէն, որ աշխարհի խռովին և տագնապին կ'ըսպասէր, որպէս զի այս խաղաղ և անպաշտպան ժողովուրդն չարչարէ հուրով, սուրով և աւերով։ Այո՛, շատերն, որք կարօղն էին դաղթեցին փութով, գիշեր ցորեկ ճամբորդելով, ամեն ոք իւր մատաղ երեխայն շալակած կը վազէ, կոյսն անլաչակ, մանկիկն բոկոտ, մայրն արտասուալից, ծերունին անցուպ հեւալով կը վազե՛ն, կը վազե՛ն, սակայն չ'են պրծնիր տառապանքէ. լքումն ըլկումն, տաժանքէն, և տանջանքէն յետոյ նօթութիւնն կը հասնի, որ իւրեանց հետ համաքայլ կ'ընթանայր, թշուառ ուղեւորներն կը դիմեն անդ, ուր իւրեանց իրաւունք կը կարծէին գուտ գտնել. ապաւէն գտնել այլ, աւա՛ղ, ամեն սիրտ ապառաժ դարձած է արդէն . . . և անդ բացօթեայ, պարսպի տակ խե՛ղճ և անսնունդ, վնատանքէ մոլար, հայրենիքէ կարօտ, կսկիծով պաշարուն, ցաւերով լեցուն, մահէ անտարակոյս, կեանքէ տարակոյս, երեկոյն վերայ կը հասնի և կը ննջեն անյո՛յս . . . առաւօտ է արդ, զարթեա՛ն թէ ոչ կը ճգնի՞ն թէ կը հանդչին. — ո՛վ դիտէ։

Հայե՛ր, մեր աքսորական եղբայրներն էին դոքա, որք իւրեանց ժրութիւննին հետ ունէին մանուկի անմեղութիւն, մայրի սիրտ և կոյսի երկչոտութիւն. այլ սակայն մարդկային անգթութիւնէն հալածուեցան. և մի բարբարոս անտարբերութիւնի առջև, մի ամենողորմածի, որ դութն մարդի չը ծախէր, քիթին տակ, որ Քրիստոսեան քօղին ետև աշխարհների խաղաղութիւնն ի ծուփ կը հանէ. և խղճմտանքի ձեռքով ոճիրներ կը գործէ. որ, թողէք որ ասեմ, խաչն և սուր իրար կապած աշխարհէ աշխարհ կը վազէ, ամեն ուրէք հուր և բոց կը տեղայ յ'անուն այն խոնարհ Քրիստոսի, որ մի ցուպ իսկ չ'ունէր. զիս թողէ՛ք դեռ ազատ, որ իւր լայնածաւալ սահմանի մէջ հարիւր միլեօն մարդերի խիղճն խարոյկի կը դատապարտէ, և իբր մարդասէ՛ր ճշմարիտ մարդասէրներն յաւիտենական սառնամանիքի, և սա կը թողու որ մի ափ Հայ ժողովուրդն նօթի մեռնի, բարէ՛, աշխարհի մէջ շահն և ագահութիւն մեծամեծ յաղթանակներ են տարած:

Այլք մնացին. մնացին, այլ չ'ապրեցան, անդ հասաւ դուժն և անխնայ կոտորեց 'զայնս:

Թիռ առէք, Պարոննե՛ր, գնացէք Ալաշկերտ, գնացէ՛ք Հայաստան. կրկնեցէ՛ք, պտտեցէ՛ք ամեն տեղ, ճամբային վերայ, առուակին քով, չաքերին մէջ, ապառաժին վերև, փլատակին ներքև ոճիրներն կը ծխա՛ն դեռ. ծունր կրկնեցէ՛ք, համբուրեցէ՛ք, երկիւղած համբուրեցէք այդ արիւնոտ հողեր, սուրբ են նոքա. արդարին արցունքովն են թրջուն, անմեղին արիւնովն են օծուն. անդ կաթն արիւնին հետ խառնուեցաւ, մայրին մանուկին հետ

անկաւ դիաթաւալ, որ կը փութայր. կը վաղվաղէր լալագին և մոլար, կուրծքին վերայ սեղմելով միամեայ մանկիկն. կը դառնար և կը լար, կը նայէր և կը փախչէր. յանկարծ մի սուր հասաւ, հնձեց երկուն ալ մի զարկով. մին հառաչեց մին ճչեց՝ ոչ մին գութ գտաւ, ոչ միւսն կեանք ունեցաւ. մին գորովէր միւսն ծաղիկ, սպանուեցաւ մանկիկն մայրական թևերին մէջ. անկան երկուքն ալ ճանբային վերայ. արիւնն լուաց, մրրիկն մի թեթև փոշիով գերեզմանեց և հինօրեայ մի բարուի սգալով և սուր խարշափումով կը հովանաւորէ 'զիրենք բողոքելով ոճիրին դէմ:

Գնացէ՛ք, Պարոններ, դեռ առաջ գնացէ՛ք, մի վախնաք, անդ շատ բան պիտի տեսնէք, 'զոր պատրաստեցին անյագաբար վայրենի ցեղեր, Քուաձև ժայռին տակ, ուր հալար ծաղիկներ կը փթթին գունագեղ, դալար մարմանդին վերայ մարդկային ոսկորներ կան դէզ ի դէզ:

Մի կոյս էր դա լուսինի պէս գեղեցիկ և ամօթխած, իւր շուրթերէ ժպիտ կը կաթէր, ցօղի նման անարատ էր նա և բոցի պէս մաքուր, հայրենական տունէ յափշտակեցին ըզնա կատաղաբար մինչ կը պատահէր սիրտ ի թունդ թոնիրի լուսմին ներքև. ժայռին տակ տարին, արբեցան . . . . և այն ձիւնափայլ մարմին, ուր դեռ չ'էին դպած մարդկային ձեռքեր, անարգացաւ և մնաց անկենդան. ո՛ հէք աղջիկ, ո՛ քո՛յրդ իմ, ննջէ այժմ հայրենական հողին վերայ, նահատակուհի քոյրերիդ գերեզմաններին քով, կեանքի դառն հինգ դարուններէ յետ, որք ծլեցին ըզքեզ այդքան պայծառ և գեղեցիկ. լուսնակն հայրենի կը նախանձէր իքեն

և ամպի տակ կը թաքչէր և արևն դեռ չ'էր առած քո դէմքն երկնային․ գազանակերպ մարդեր խլխեցին ձեռք վերցունել քո վերայ, և եղծեցին նախախնամական գեղութիւնն, որ կը փայլէր ի քեզ․ հանգի՛ր, քոյրդ իմ, հանգի՛ր ո՛ հրեշտակդ ի խաղաղութիւն, սգաւոր մայրդ քո յիշատակին արցունքով կ'ողողէ . . . :

Ապա հեռացան մարդասպաններն, անդ մնաց նահատակ աղջիկի մարմինն անկենդան կակուղ խոտերին վերայ․ շուշան և մանիշակ գլխիկոր իւրեանց նուրբ և փափկիկ թերթերով ծածկեցին 'զայն և խնկեցին․ այլ ի վերջ գիշակեր թռչուններն հաւաքուեցան և կտցեցին․ գազաններ եկան և կ'երան :

Իսկ մայրն ծերունի և այրի սպիտակ մազերն փետտելով, հազար երանի՜ կարդաց այն բախտաւոր մայրերի, որք զաւակների սրբազան մարմինն իւրեանց բազուկների մէջ կ'ունենան դէթ․ արտասուեց, յուսահատեցաւ և մեռա՜ւ :

Մի սակաւ հեռի, ուր վճիտ առուակն կը խոխոջէ գլելով հազար ալիներ արծաթափայլ, և խաղալով կ'անցնի կականչ մարմանդին մէջէն, մի պատանի մարդի դիակն կայ կէս ոտներն ջրերի և աւազի մէջ թաղուած և ալիներ մեղմածուփ կը գան 'զայն կոծել հեզիկ․ հազիւ տասնևց ամեայ է պատանին կայտառ և գեղանի, որոյ կը կայէր ուրախ դաշտին մէջ երգելով․ երեւցան հրոսներն բլուրի գագաթն․ պատանին աճապարեց փախչիլ գիւղն հասնիլ, այլ մահաբեր գնտակն ա՛լ արագ հասաւ տրոփուն կուրծքն պատռեց անցա՜ւ :

Ընկաւ նա իւր արիւնի մէջ թաւալագլոր․

գալկացան նուռի պէս կարմիր այտերն գ–ղ–․․ 'զորս կոյսեր կը դիտէին զմայլանքով․ հազիւ կեանքի տասնից գարուններ պճնած էին իւր գեղադալար հասակ․ շուրթերն դեռ չէին ղպած կեանքի բաժակին :

Գիւղին մէջ, մատուռի սեմին վերայ, մի ալեւոր մարդ է ընկած, քահանայն էր դա, որ Տէրի սրբազան Տաճարն կը վազէր պաշտպանել վայրագ հրոսակի բռնութենէն․ թողլով իւր սեփական տուն, իւր զաւակներ, Խաչ և Աւետարան կը փութայր պաշտպանել, հասան բռնեցին ըղնա եկեղեցիի սեմին վերայ և յօշ յօշ կտրատեցին․ խուժեցին ապա սրբավայրն կողոպտեցին, պղծեցին և ապականեցին․ Աստուած տեսա՞ւ արդեօք . . . :

Եւ յետոյ վազեցին գիւղին մէջ, կրակ վառեցին, այրեցին, զարկին և ձգեցին դիաթաւալ ծերն մանուկին հետ, երիտասարդն երախային հետ և մայրն զաւակին․ կոյս աղջիկներ և սրբասուն հարսներ ձեռքէ ձեռք անկան և մի մայր որ գրկած իւր մանկիկ դեռածին կը վազէր խելառ ու մոլար, բարբարոսին պատահեցաւ, ոտն անկաւ, աղաչեց, պաղատեցաւ, այլ ի զո՛ւր, սպանեցին մանկիկն իւր բազուկների մէջ, մատղաշ ոսկորներին մէջէն սուրն անցաւ . . . : Հէ՜ք մանկիկ, երբ վերջալոյսի յետին նշոյլներն կը քաշուէին ամպադրացի սարերէն քո կեանքի նշոյլն սկսաւ, մայրդ ծնաւ ըզքեզ երկունքով և խնդով․ հայրդ արդէն թողած էր 'զաշխարհ դեռ դու 'զայն չը տեսած, այլ աւտին յորժամ անդրանիկ շողերն արեւի կը պլպլային այգոտ հորիզոնի ծայրն, մայրդ արտասուալից քո աւրեւն հողին կը յանձնէր․ օրրան չ'ունեցար դու,

այլ տապան միայն և լաջակն, որ խանձարուած էր ըզքեզ, պատանեց միանդամայն։

Ա՜յլ դիւղացիներ, երբ լսեցին այս դառն կոտորած, փութացին կարաւան կազմել և փախչիլ այլ հողեր, ուր կը յուսային՝ գտնել խուն հանգիստ. բանակին յետս նահանջումին կը պատահին բանակն արդ կը վազէ. գազիկաններն դանդաղ կ'ընթանան, կը լան, կ'աղաչեն վերահաս վտանգին առջեւ, այլ օ՜ւմ փոյթ... թնդանօթի ռումբերն կը պարպուին և գազիկանների հազարաւոր մարմիններ ճանչային վերայ կը փլուին դիակնացած, ոչոց վերայէն գինւորներն կը քա՛լեն կ'անցնի՛ն։

Ո՞ւր կ'ապրիմք, ո՞ Տէր, մարդկութիւնն դէպ իւր անցեա՛լ կը դառնայ արդեօք, դէպ վայրենի դարեր։

Բ.

Այսպէս ահա կանգուն և հզօր ազգերի քաղաքականութիւնն մեր հայրենի աւեր երկիրի վերայէն կ'անցնի այսքան աղէտ սփռելով անդ. զօրաւորն ակարին վերայ կոխելով կ'անցնի։ Աշխարհ լեց, այլ լռեց, տեսաւ այլ չը զարմացաւ. զարմացաւ, այլ չը զայրացաւ, զայրացաւ այլ չը բողոքեց. աւա՛ղ, տասիններորդ տարի մէջ ալ դեռ քաղաքական անհաշտ նկատումների երկաթէ ձեռքերն կը ծանրանան մարդկային սիրտի և ընկերասիրական զգացումների վերայ...։

Եւ քաղաքականութիւնն. Պարոններ, ունի իւր քաղաքուած կատաղութիւն, որ տիրոջի կաչէն կը բրա՛ւ և ընդհանուրին վերայ կ'անկանի, քաղաքականութիւնն է որ անագորոյն պատերազմներ կը յուզէ ժողովուրդներն իրարի դէմ յարուցանելով. բոցի կը մատնէ ամբողջ աշխարհներ մի անարդ շահի ակնկալութիւնով։

Քաղաքականութիւնն Պարոններ, կոկուած ֆայրենութիւնն է որ ժողովրդային կարճ և մերթ ցնցումէն երբեմն խուսափուկ և անյիշատակ դարերէ անցնելով դանդաղ դայնի տակ և բիւր պարոյրով կը դայ կը հասնի մինչ արդ և այս յետին ձայն կը ուանայ։ Նա մարդկային ճակատագիրն նախանշանութիւնէն յափշտակած, իւր երկաթէ ափերի մէջ կ'առնու, կը վճռէ, կը կնքէ և կը դարկնէ, հանրային խաղաղութիւնն ամուրդի հանելով։

Քաղաքականութիւն, Պարոններ, ժողովրդային դժբաղդութիւնն է որ աշխարհի բազդին երրաանները սասսիկ սեղմած, մարդկային առաջդիմութիւնն մերթ յառաջ կը վարէ մերթ յետ կը մղէ և ժողովրդական երջանկութիւնն կը թունաւորէ մահով։

Քանի որ քաղաքականութիւնն իւր բուն նպատակչ՝է քաղած ժողովուրդի իսկական յառաջդիմութիւնէն քանի որ նա անդդաստ ատելութիւն կը սերմանէ կը սնուցանէ նոյնով ժողովրդային կայրդաղափարն. քանի որ նա խաղաղութիւնն խաղաւիկ է արած և յաղթականի արիւնոտ դափնին կ'ներբաղէ. քանի որ նա կը վճռէ այն խոտոր և կարծուած ուղղութիւնն — աշխարհի շահն — արիւնի մէջ. քանի որ նա իշխողի և իւր արքանեակների

յամքէն ծնունդ կ'առնու. քանի որ բռնաւորն և ելթ կը տայ նմա հրաման յառաջ կամ յետ, նա ոչ այլ ինչ է բայց եթէ մի անվերջ թշուառութիւն, որ մարդին հետ կըսկսի և գողցէս նորա հետ պիտի վերջանայ։

Մի ամէ հետէ քաղաքականութիւնն մի կատաղի պատերազմ բորբոքեց, որ առջև շատ աշխարհներ երկիւղով համակուեցան և ում մեք ներկայ գտուեցանք, ինչ տեսանք. — մին իւր վեհապետական իրաւունքի համար կռուեցաւ, միւսն մի պահանջի, որ անպատրուակ չէր, մին յաղթեց բուռն ճակատներէ յետոյ, միւսն բիւր ճիգերէ վերջ. սակայն ոչ ոք կռուեցաւ ժողովրդական խաղաղութիւնին համար և — է՞ր չ'ասեմ — ոչ ոք միջամտեց արդարութիւնի համար. անձնիւր ոք իւր շահի համար մարտնչեցաւ, անձնիւր աշխարհի քաղաքականութիւն իւր ուղղակի կամ անուղղակի օգուտներն խլեց և լուեց։

Սակայն այդ շահէ, այդ օգուտէ ոչինչ ստացաւ ժողովուրդն, որոյ սոսկական թշուառութիւնն եղաւ այդ պատերազմ. վաճառականութիւնն, որ ժողովուրդի բարեկեցիկ վիճակն է և հոգին, խարանեցաւ. գործաւորն անգործ մնաց, արհեստաւորն նօթի մնաց, մայր անզաւակ մնաց և հարսն անմուսայ. Այո՛, ժողովուրդն էր, որ ղրկանք կըրեց, արիւն տուժեց, կեանք տուաւ, բայց շահեցաւ ոչինչ։

Եւ ինք չ'էր, որ գրգռեց այս կատաղի պատերազմ, սակայն ինք կորոյս ի նպաստ քաղաքականութիւնի հեղինակներին։ Ո՞վ վառեց թնդանօթի պատրոյկն, ժողովուրդն թէ քաղաքականու-

թիւնն. և ո՞վ չահեցաւ այդ արիւնոտ փոթորիկի մէջ, — քաղաքականութիւնն տա պարոններ, մի խաղէ, ուր ժողովուրդն միշտ կը կորուսէ, մի ո[illegible] խաղէ։

Գ.

Քանի որ ժողովուրդներն տգիտութիւնով կորուսած են իւրեանց հզօր և գերագոյն իրաւասութիւն բնութիւնին վերայ և կը խոնարհին հնադարդ քաղաքական լուծի առջև, մի ափ մարդի և նոցա հեղինակութիւնին առջև, քանի որ ժողովուրդներն լոյսն կը լքանեն և տուներին կը դառնան, մի կոյր և սոսկալի հլութիւնով խաղաղութիւնն կը թողուն և մահի գործին կը գրկեն. գաղարարն կը ձգեն և սուրի կը վազեն, եղբայրութիւնին դէմ լրին հայհոյանք կ'արձակեն և ատելութիւնին կը պլպլուին. քանի որ ժողովուրդներն չ'են սիմաիր, չ'են շարմիր, չ'են կանգնիր, չ'են փշրէր, քաղաքականութիւնն դեռ մեծամեծ յաղթանակներ ունի իւր առջև և ժողովուրդն երկար տագնապներ։

Թողո՛ք ինձ, Պարոններ, դեռ ծանրանալ այս արիւնոտ նիւթի վերայ։

Այո՛, ժողովուրդն իւր առջև ունի անհնարին տառապներ, որք պիտի երկարին անվերջ. տեսէ՛ք, տեսէ՛ք, Պարո՛ններ, Պոլիսի փողոցներն և մկիթներն լի անհամար հաւաճիներով, որք [illegible]ուս են, կիներ են և հաց չ'ունին, զոհ

չ'ունին, բնակարան չ'ունին և որոց կեանքն ենթակայ է մի վերահաս մահի. որոց խաղաղութիւնով կ'ապրէին իւրեանց հիւղակի մէջ, սակայն մոլեռանդութիւնն — որ մասն ունէր քաղաքական խորհուրդին մէջ — և պատերազմն արտաքսեցին 'զիրենք իւրեանց տուներէ: Նոքա, որք երէկ հիւրասիրութիւնով կը պարծենային, այսօր հաց կը մուրան անցորդէն փողոցներն ձեռք երկարած:

Տեսայ ես — անշուշտ և Դուք ինձ նման — մարդեր, որք նօթութիւնէ մեռան. այլք, որք պատուէ անկան, բարոյապէս մեռան. տեսայ, Պարո՛ններ, տեսայ հրեշտակադէմ աղջիկներ չկնոտ և ամօթահար, որք իւրեանց երկնային լումայն կը հրապարակէին երկու կտոր մետաղի համար. և համեստ կիներ, որք իւրեանց սրբազան պարկեշտութիւն ի վաճառ կը հանէին մի պատառ չոր հացի համար, և լաւ մտիկ ըրէ՛ք ինձ, Պարոններ, մի օր ալ տեսայ հազիւ վեցամեայ մի տղեկ. որ աղբանոցին մէջ խիլ ի խիլ կ'որոնէր և գիտէ՞ք ինչ. — սնո՛ւնդ..., : Շուներն կը գտնեն բարեբար ձեռքեր, որք իւրեանց մի կտոր հաց կը նետեն, այլ, բարէ՛, մարդկային արարածներն նօթի կմեռան և անգէն իրաւունք չ'է՞ր ինձ կրկնել Լամընէի աղաղակն. «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ո՞վ կրնար գուշակել թէ մի օր պիտի զղջայի մարդ ստեղծելուս վրայ...»:

Այս արհաւրալից օրերին մէջ, որք դեռ չ'են վերջացած, եղան մարդեր, որք տուն, տեղ ամենքան լքին և աներևութացան. ոմանք, յուսահատութիւնէ տարպուն վերջ տուին և տառապալին և կեանքին միանգամայն և գնացին հողէ բարձին վրայ

հանգչեցունել վշտակոծ գլուխնին:

Եղան ոմանք որք գողացան, ձեռք զարկին ըստիպուած օտարի ստացուածքին և ինչքին, որպէս զի ճարեն կեանքի դէթ սակաւօրեայ ապահովութիւն. այլ՝ հակառակ զգոյշ միջոցներու, ոստիկանական աչքէն չը պրծան. բանտուեցան և երբ բանտի դուռն բացուեցաւ իւրեանց առջեւ, երբ կապերն և արգելներ թոթուեցին և դուրս ելան արդէն բոլորովին կերպարանափոխ եղած էին. բանտըն խլած էր իւրեանց յետին և ամենամեծ ըզգացում, — ամօ՛թ —: Նոցա հոգի մի յեղաշրջում էր կրած արդարև, այլ բարի՜էն ի չար, արդար էին բանտէն առաջ, անարդար եղան բանտէն վերջ: Ըւ ո՞ւմ, կը վերաբերի յանցանքն. անհատի՞ն որ տկար էր և ստիպուած, թէ նմա, որ հզօր էր և ստիպած, որ հրամայած էր անուղղակի և դատապարտից ուղղակի, կրկնեմ, անհատին որ պատերազմէն առաջ հանդարտ, խաղաղ և պարկեշտ իւր հաց կը ճարէր, այլ երբ պատերազմն խարանեց նորա ապրուստի միջոց, երբ նորա ժրութիւնն տկարեց և փակեց նաև նորա առջև անուղղապէս կեանքի դռներն ողջոյն, — է՞ր չ'ասուի — ըստիպեց ըզնա որոշել, մեռնիլ և կամ գողանալ: Այո՛, մեռնիլ, և թողուլ կեանքն, 'զոր անկարելի է ունենալ մի այլ անգամ և որ քաղցր է այնքան, մեռանիլ. լքանել 'աշխարհ, որ այլոց կ'ընծայէ բիւր հրապոյր ոսկեզօծ, ա՛լ չը տեսնել բնականին հիապանծ ներդաշնակութիւն արեւ, աստղ և լուսին, ծով և հով, ա՛լ չ'ունենալ երազնե՛ր, յոյսե՛ր որք կեանքի մեծութիւն և գոյութիւնն են, թողուլ մտերիմներ, սիրելիներ և — գուցէ — զաւակը

ներ. մեռնի՛լ, տեսնելով շէն և շարժուն բնու-
թիւնն և մարդեր իւր շուրջ, տեսնել հացեր, որք
կրնան իւրեան կեանք տալ, հացագործի սեղանին
վրայ դէզ առ դէզ, և ոսկին սպասներու մէջ կոյտ
ի կոյտ ո՜հ, այս տառապութիւնին մէջ կ՞ր այսքան ան-
գթութիւն մի կեանքի դէմ. գողանա՛լ, թէեւս
դիւրին է յոյժ, և այս յախուռն որոշումով կ՚ան-
կանի գահավէժ թշուառ արարած ։

Այսպէս երբ դարս կ՚ելնէ բանտէն, կարծես
թէ ալ վերջացած է նմա համար ընկերական կար-
գաւորութիւնն, մի մարտ և ատելութիւն ունի
մարդին (հանուրին) և օրէնին դէմ. մին չըպաշտ-
պանեց 'զինքն, միւսն չը ներեց ։ Բանտն խուզած է
զգալաբար նորա բարի զգացումներն մի առ մի և
արմատաքի ։ Բանդն մի անդունդ է, որ եզ[illegible]
յատակ ալ չ'ունի.

Դ.

Այս բոլոր աղէտաւորներն ժողովրդական
տարրներն էին, որոց միակ հաճոյքն և կեանքն էր
աշխատութի՛ւն ։

Եւ գիտէ՞ք, ո՛վ է ժողովուրդն. — Նա որ կը
հերկէ, կը ցանէ, կը հնձէ և իւր և այլոց համար
կը պատրաստէ կեանքի սնունդն. Նա, որ կը տքնի,
կը ճգնի, կը խուզէ, կը յուզէ, կը գտնէ և մարդ-
կային օգուտի կը նուիրէ իւր գիւտ ։

Նա որ բնական կատաղութիւնին դէմ կ՚ան-
սասէ — դրեթէ միշտ — և մրրկին և կոհակ...

...նդ բորբոքումն ծաղրելով Ովկիանի անյատակ
անդունդներն կը սպառէ կը սահի՛, և յաճախ նո-
րա ծալերէն սպրդելով կ՚իջնէ անհունութիւնն չա-
փել և խուզարկել. անսահմանութիւնն կը կտրէ,
կ՚անցնի՛. մերթ տիեզերի զենիթն կը բարձրանայ
և մերթ ի նատիր կը սուզի, հողագունտի փոշինե-
րըն եւ կ՚առնու և հին խաւերի ներքևէն ահագին
և անյիշատակ դարեր կը գտնէ ։

Նա, որ կոշտ և չնչին իրերն կ՚ազնուացունէ և
կ՚աստուածացունէ մի հրաշալի վսեմութիւն տա-
լով նոցա, մանաւանդ գործածելով 'զայնս մարդ-
կային առաջդիմութիւնին ։

Նա, որ մի գերագոյն կարողութիւն փոխ առ-
նելով Արարչապետէն, բոլոր բնութիւնն իւր ճա-
շակի և կամքի համաձայն կը սրբագրէ, կ՚այլափո-
խէ և կը կերպարանէ հազար գոյնով հազար ձևով
Ժողովուրդն տիեզերի հոգին է ։

Եւ ի՞նչ պէտք է ժողովուրդին, որ իւր կողմն
ունի աշխատութիւն և թիւ. — հաց, խաղաղու-
թիւն և ազատութիւն. Ժողովուրդին պէտքն քա-
ղաքականութիւն չ՚է. այլ ճշմարիտ քաղաքակր-
թութիւն, որ իւր սկիզբ առած լինի ազգերի
եղբայրութիւնէն. ահա այս միայն պիտի բարձ-
րացունէ ժողովուրդի խոնարհ ճակատագիր իւր
ստրկական վիճակէ ։ այս սկիզբի տարածումն մի-
այն պիտի կարօղանայ արտաքսել աշխարհէն այն
արդարութիւններ, որք գերագոյն արդարութիւ-
նէն բղխած չ՚են, խիղճի և գութի վերայ չափ-
ուած չ՚են. օրէնքներ, որք բնութիւնի վեհագոյն օ-
րէնքէն ծագած չ՚են. ճշմարտութիւններ, որք երկ-
նային ճշմարտութիւնէն իջած չ՚են և կարգեր,

որք տիեզերական ներդաշնակ կարգաւորութիւնէ առնուած չ'են և սոսկ անհատական հրամաններ են։

Ե.

Սակայն նա, որ բովանդակ մարդկութիւնն կը դատվէ, այս հրամանի առջև ճակատ կը խոնարհէ. նմա կը ծառայէ, որպէս դերագոյն տէրի. կը հնազանդի նմա որպէս գործի։ Ժողովուրդն ինքնին կը ստեղծէ մահի գործին, որով ինք կ'անկանի միայն. ճակատներ կը մղէ, հուրին, բոցին դէմ կանգուն կը կենայ, մահն բիւրիցս կ'ողջունէ, դաշտերն իւր արիւնով կը լուայ, և անցած ճամբայներին վերայ մարմինէն կամուրջներ կը թողու կ'անցնի, այլ ի՞նչ շահ. ի՞նչ ցեռաւ Ալէման ժողովուրդն հինգ անգամ ինքնին. — ոչի՞նչ. սահմանադրութիւնն վերայ մահի գործիներ միայն. ի՞նչ շահ Անկիլիական ժողովուրդն դէպ Հնդկաստան այն խիստ արշաւանքէն, ժողովուրդի դուակներն ամեն օր նեղութիւնէ յուսահատ թայլը գեռի յորձանին մէջ կը նետուին, մինչդեռ անդին Գանդէսն անձնիւր օր մէկ միլեոնէն աւելի լիրա սթերլին կը դէ իւր ալիների հետ և Անկիլիական քսակն կը լեցուի. բայց ո՞երեր կ'երթամ. « Լռեցէ՛ք, մի՛ոք իմ . . . » կ'աղաղակէ Պոսիւէ։

Ո՛ դաղափար, մի յորձան ես դու, որ չար չ'ունի։ Ո՛ սիրտ, մի հեղեղ ես դու, որ յախուռն կը զայ և կը հոսի անկիրա։

Զ.

Այսպէս յարոներ, քաղաքականութիւնն իւր սրիւնոտ ոտքերով անցաւ մեր հայրենի հողին վերայէն հուր, աւեր և ասպատակ սփռելով անդ. հազիւ թէ փոքր ինչ դադրեցաւ նա, և ահա սովն ծայր կը տայ. Գլի կը տառապի, Մուշ կը շարչարուի նեղութիւնէ։

Մեր Հայ եղբայրներն, Հայե՛ր, իւրեանց հոց կորուսին. բի՛ւր ալէոներէ, բի՛ւր տառապներէ անանուն հալ և մաշ ձեզ կ'երկարեն իւրեանց դողդոջուն բազուկներ, նեղիւն են, կը մեռնին, հոց կ'աղաղակեն, գթացէ՛ք, գթացէ՛ք ձեր համարիւն եղբայրների վերայ, որոց կ'ուանքն տառապով կը լեցուի, միայն ազգային անունի համար։ Դուք, հարուստներ, ձեր սեղանի փշրուանքներէն նետեցէք, և նոցա քաղց բուժած պիտի լինիք լիուլի. դուք, տիկիններ, ձեր հնոտի ճորձերն տուէ՛ք և նոցա մերկութիւնն ծածկած պիտի լինիք։

Իսկ դու, երիտասարդութիւն, դու լոյս տո՛ւր. կեանքի գիտակցութիւնն ծաւալէ ամեն ուրեք պարարքի ճանաչումին հետ. ո՞երիտասարդութիւն, ոյժ ներշնչէ, աշխոյժ կաթէ Հայրենիքին մէջ. ըստուարացո՛ւր Հայի թիւն իւր հայրենի հողին վերայ որպէս զի ապարդիւն չ'ելնեն այն ապադայ և գեղաձիծաղ յոյսեր, որք ըմբեզ կ'օրրեն արդ. պինդ կեցի՛ր ազգային նպատակի՛դ մէջ, վնտանքէն առաջ անցիր սրբազան դործիդ մէջ. զոհէ սեփա-

կանն հանրականի տաճարին, դի աշխարհիս վերայ երկու բան կայ միայն—լաւ մտիկ տո՛ւր ինձ—մարդն որ կ՚անցնի զերթ ստուեր, և մարդ կութիւնն, որ կը մնայ զերթ տիեզեր. մարդէն աւելի մարդ կութիւնին յարէ՛ դու և կեանքէն աւելի անմահութիւնին, որ առջև բնութիւն համբուռն կը ծնրադրէ հիացիչ։

Հայրենիքն մարդ կութիւնի մի մասն է և հայրենիք միանգամայն . . . ։

1878 Մայիս 28 ՍԻՍԱԿ

Եէտի—Գուլէ.

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐՆ

ԽՕՍ Տաւիղարձի մէջ արտայայտուած

ԳԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԽՆ

ՄԱԼՎԻՆԱ Ոտերգ·
ՍԶՆՈՒՌԱԳՆԵՏԱԿԱՆԻՆ ՀԱՃՈՅՔՆ Ոտերգ·
ՃԱՌԵՐ ԵՒ ՏԱՂԵՐ

ԳԻՆ 2 ½ ԳՐՈՒՇ· ԱՐԾԱԹ

22864-22870

<< Ազգային գրադարան
NL0056510

<< Ազգային գրադարան
NL0056513

<< Ազգային գրադարան
NL0056509

<< Ազգային գրադարան
NL0056512

<< Ազգային գրադարան
NL0056508

<< Ազգային գրադարան
NL0056511

<< Ազգային գրադարան
NL0056507